

II 1/65

ԴԱՍԱՏԵՏՐ

ԿՐԹՆԻ



ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ. ԷՋԱՐԻԱԾՆԻ
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԻԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ

«Ունկնդիր եւ տես ըստդ որտե՛ս
«դոր եղանակեա բերանդը՝ հաւատաա-
«ցես եւ որտե՛ս եւ ողորց հաւատաա
«որտե՛ս՝ զնոսին եւ դործով ցոլցցես»

Մաշտոց ձեռնագրութ, 166

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆՈՍ, ՄԻԱԾՆԻ

1890—ՌՅԼԹ

Անրէք
403

II 7
65

2(075)
5-97 պ.

ԴԱՍԱՏԵՏՐ

2006

ԿՐԹՆԻ

Բ. ՏԱՐԻ.

ԿԱԶՄԵՑ

1670

ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ

«Ունկնդիր եւ տես բոլորով սրտիւ,
«զոր եղանակես բերանով՝ հաւատա-
«ցես եւ սրտիւ՝ եւ որոց հաւատա-
«յրտիւ՝ զնոսին եւ գործով ցուցցես»:

Մաշտոց ձեռագրութեան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

1890—ՌՅԼԹ

ԳՆԴՆԱՍՏԻ

ԿՍՕԴԻ

ԿԿԿԿԿԿ

ՀԻՄՆԱԿԱՆ

ՏԵԼԵՔՈՆ ՏԵԼԵՔՈՆ ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



403-2006
(4873)
41/ 2B 403

1830-0821

ԴԱՍԱՏԵՏՐ

ԿՐՕՆԻ

(Համառոտ կրկնութիւն ա. տարուայ տասընթացքի միայն պատմական մասին Ս. կուսի ծնունդից մինչև Յիսուսի ծննդեան պատմութեան վերջը):

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱՐԻ ԵՐԳԵՐ.

Մարմին տէրունական և արիւն փրկչական կոյ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ. խաղաղութեան ձայն հնչեցաւ. սուրբ ողջունիս հրաման տուաւ. եկեղեցիս մի անձն եղև, համբարս յօգ լրման տուաւ. թշնամութիւնն

հեռացաւ սէր յընդհանուր սիրեցաւ:

Արդ՝ պաշտօնեայր, բարձեալ զձայն՝ տուր
օրհնութիւն ի մի բերան միասնական Առ-
տուածութեան որում սրովբէքն են սըր-
բաբան:

*
*

Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց.
լի են երկինք և երկիր փառօք քո: Օրհնու-
թիւն ի բարձունս. Օրհնեալ որ եկիր և
գալոց ես անուամբ տեառն: Ովսանա ի
բարձունս:

*
*

Գոհանամք զբէն տէր. որ կերակրեցեր ըզ-
մեզ յանմահական սեղանոյ քո բաշխելով
զմարմին և զարիւն ի փրկութիւն աշխար-
հի. և կեանք անձանց մերոց-

ԳԼ. Ա.

Ղազարոսի յարո-լի-նը, (Յուլ. Ժա.)

Երուսաղէմի մօտ մի գիւղ կար Բեթա-
նիա անունով. Բեթանիայում էր ապրում
Ղազարոսը, որին Յիսուս սիրումէր: Ղա-
զարոսը հիւանդացաւ, և հենց այդ Ժա-
մանակ Յիսուս երկու օրուայ ճանապարհ
հեռու տեղ գնաց, և այդ տեղ էլ իւր առ-
տուածային իմաստութեամբ իմացաւ Ղա-
զարոսի մեռնելը:

Յիսուս իւր աշակերտներին յայտնեց որ
Ղազարոսը մեռել է, և երբ նոցա հետ Բե-
թանիա վերադարձաւ, Ղազարոսը արդէն
չորս օրուայ մեռել էր և թաղուած: Ղա-
զարոսը երկու քոյր ունէր մէկի անունը
Մարթա էր իսկ միւսինը՝ Մարիամ: Մար-
թան երբ լսեց թէ Յիսուս եկել է, վազեց
նորա առաջը, լաց էր լինում և ասում.

տէր, եթէ այստեղ լինէիր, եղբայրս չէր մեռնիլ. բայց հիմա էլ հաւատումեմ որ Աստուծուց ինչ էլ խնդրես՝ կը կատարի: Յիսուս պատասխանեց. ես յարութիւն էլ եմ կեանք էլ, ուրիշ ինչ հաւատայ չի մեռնիլ. այս բանին հաւատովմես: Մարթան ասաց. Այո՛ տէր, ես հաւատացի որ կենդանի Աստուծոյ որդի Քրիստոսը գնաւ ես:

Մարթան եկաւ և Մարիամին էլ իմաց տուեց Քրիստոսի գալը, և երկուքն էլ եկան Յիսուսի մօտ: Հրէաները որ եկած էին Մարիամին ու Մարթային մխիթարելու, կարծելով թէ նոքա գնացին գերեզմանը լաց լինելու՝ իրանք էլ գնացին: Յիսուս երբ տեսաւ որ Մարիամն էլ հրէաներն էլ լաց են լինում, ինքն էլ լաց եղաւ և զազարոսի գերեզմանի տեղը հարցրեց. մօտեցաւ գերեզմանին, պատուիրեց գերեզմանը բանալ. Մարթան յայտնեց որ Ղազարոսը չորս օրուայ մեռել լինելով արդէն հոտած կըլինի: Յիսուս պատասխանեց. քեզ չստացի որ, եթէ հաւատաս, կրտսէսն Աստուծոյ վառքը:

Երբ գերեզմանի քարը շուռ տուին՝ Յիսուս վեր նայեց. և ասաց Հայր, շնորհակալ եմ քեզանից որ ինձ լսեցիր. այժմ՝ էլ այս ժողովրդի համար լսիր, որ տեսնեն ու հաւատան թէ գնաւ ես ինչ ուղարկել և բարձր ձայնով կանչեց. Ղազար, դուրս եկ. Ղազարը իսկոյն յարութիւն տուաւ:

Այնտեղ գտնուող հրէաներից շատերը հաւատացին Յիսուսին, ոմանք էլ գնացին փարիսեյիներին և հրէաների մեծամեծներին պատմեցին Յիսուսի արածը:

Քահանայապետներն ու մեծամեծները խորհուրդ էին անում ու ասում. ինչ անենք, այս մարդը շատ հրաշք է գործում. եթէ այդպէս թողնենք, բոլորը նորան կը հաւատան և նորան թագաւոր կանեն: Հուսմանն էլ կրկեն կըգան մեզ ազգով, ցեղով կը ջնջեն: Իսկ Վալիափա քահանայապետը խորհուրդ տուեց ու ասաց. լաւ է որ մէկը ժողովրդի համար մեռնի քան բոլոր ազգը կորչի: Եւ այնուհետեւ պատճառներ էին որոնում որ Յիսուսին կորցնեն:

ՇԱՐԽԱԿԱՆ ՂԱԶԱՐԱՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

«Յ. Կենդանութեանց բաշխող Քրիստոս ի բեթանիա եկաւորեալ այսօր, բարեկամին Ղազարու պարգևէ զկենդանութիւն։

Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի և ընդ մարիամն, ողբակցէր և որպէս մարդ հարցանէր ո՞ւր եղիք զՂազարոս։

Եւ որպէս զԱստուած բարբառով յարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն, և զսեզընթաց ձայնիւ մեռեալն եկն արտաքս անպական։

ԳԼ. Բ.

Տանն Կոնստանդ. (Մարտի. Գլ. Է. Է.) :

Յիսուս քարոզումէր որ երկնքի արքայութիւն մտնելու համար, պէտք է առաջադրարարութիւն տեսնել. ուստի և այս

առիկը տեսց. մի միջոցան յղովմանս

Տասն աղջիկներ կային. դռբա իրանց լաղտերներն առան, որ հարսին ու փեսայի առաջը գնան։ Աղջիկներէց հինգը յիմար էին իսկ հինգը իմաստուն։ Իմաստունները լաղտերներ չհետ բռնական էլ ձէթ վերտռան, իսկ յիմարները ոչ։ Փեսան ուշացաւ, բոլորն էլ սկսեցին ննջել։ Կէս գիշերին յանկարծ լսուեց թէ փեսան գալիս է վերկացէք, առաջ եկէք։ Աղջիկները վերկացան իրանց լաղտերները պատրաստեցին։ Յիմարների ձէթը պակսել էր, իմաստուններից ձէթ խնդրեցին, իսկ նոքա պատասխանեցին. գուցէ մեզ և ձեզ բռնական չըլինի, գնացէք ձեր համար ձէթ գնեցէք։ Երբ յիմարները ձէթ գնելու գնացին, փեսան եկաւ. պատրաստները նորա հետ մըտան հարսանիք և դուռը փակուեց. եկան յիմարներն էլ, սկսեցին դուռը բաղխել ու կանչել. Դուռը բաց, Դուռը բաց, փեսան պատասխանեց. ձեզ չեմ ճանաչում։

— Փեսան Քրիստոսն է. յիմարներն ու ի-

մաստունները՝ մարդիկն են. հարսանիքը՝ երկնքի արքայութիւնն է. լապտերը՝ քրիստոնեայ անուան է. որ ամեն մարդ կրում է. իսկ ձէթը՝ բարեգործութիւնն է. ու լապտեր գործութիւնն չունենայ. չի կարող երկնքի արքայութիւնը մտնել, և թէև քրիստոնեայ էլ լինի, բայց Քրիստոս նորան չի ճանաչիլ: Ամեն ժամանակ պէտք է պատրաստ լինել և բարի գործ գործած, որ մահը մեզ անպատրաստ չըգտնի: Յիսուս այս առակը ղերջացրեց. «Արթուն կացէք բոլորհետեւ յըզիտէք (ձեր մահաւան) օրն ու ժամը»:

* *

ՀԱՐԱԿԱՆ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ.

Քի. Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւր լապտերաց հիւն ընդ առաջ հրկնաւոր փեսային:

Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւրոյ անպատրաստ գտան գալստեան փե-

սային շիջեալ լապտերօք: Կուսն որոյ և մեք պատրաստեցուք իւր հագեւոր, զի մոյցուք ի յառագատ անուան փեսային վառեալ լապտերօք:

ԳԼ. Գ.

Յիսուսի հարնալիւնը.

Ղաղարոսի յարութիւնից յետոյ որ քան որ Յիսուսի պատիւը հասարակ ժողովրդի ուռաջ բարձրացաւ, այն քան էլ հրէից մեծամեծների նախանձը մեծացաւ և մամռումէին Յիսուսին սպանել: Յիսուսի աշակերտներէն մէկը, որի անունը Յոհան էր և ինքն էլ շատ արժաթառէր, մարդ էր, իմանալով հրէի մեծամեծների այս միտքը, գնաց նոյո մօտ և ասաց. ինձ ի՞նչ կրտաք, որ ես Յիսուսին ձեզ մատնեմ: Նոքա էլ խոտաղան երեսուն արծաթ տալ: Յոհան երբ ստացաւ արծաթը՝ յօժարութեամբ

յանձն առաւ մատները։
 Զատիկի անիւն Յիսուս վերնատանը բնթը-
 րիքի ժամանակ գիտենալով իւր մահի մօտե-
 ցած լինելը իւր մարմնի տեղ հացը և քրիւ-
 նի տեղ գինին տալով աշակերտներին՝ հառ-
 տառեց Ս. պատարագի խորհուրդը, որ ի-
 րան յիշելու համար միշտ կատարեն. այ-
 նուհետեւ Յուդային առաջ գնա՛ ինչ որ ա-
 նելու ես, արա՛. որովհետեւ գիտէր որ Յու-
 դան արդէն խօսք էր տուել իրան հրէանե-
 րին մատներու, երբ Յուդան գնաց ինքն էլ ա-
 ռաւ աշակերտներին և գնաց Զիթենեայ լե-
 ուր այնտեղ աղօթելու։ Զիթենեայ լեռան
 մօտ է Ղեթսեմանի գիւղը։
 Յիսուս Ղեթսեմանի պարտիզում թողնե-
 նելով իւր աշակերտներին առանձնացաւ,
 սկսեց աղօթել, հոգս անել և արամել։ Հենց
 այս ժամանակ Յուդան էլ հեան առած հրէ-
 աներ և ամբոխ եկաւ Յիսուսի եղած տեղը,
 նա ասել էր իւր հեան եղածներին թէ,
 սեմ որ համբուրեմ, նա է Յիսուսը, նորան
 բռնեցէք, և մօտենալով Յիսուսին՝ համբու-

րեց Յիսուս առաջ, Յուդա ինչ համբուրե-
 լով ես մատնում։

Ամբոխը բռնեց Յիսուսին և տարան քա-
 հանայապետների մօտ. այնտեղ երեք տեսակ
 մեղք բարուրեցին Յիսուսի վերայ. երեքով
 էլ նա մահապարտի պատիժ պէտք է ստա-
 նար, և մեղքերն էին. ա. որ Յիսուս իրան
 Աստուծոյ որդի է անուանում, մինչդեռ
 ինքն մարդ է. բ. օրէնքի հակառակ բաներ
 է քարոզում և անում, որով մեղքեցնու-
 մէ ժողովրդին և գ. իրան հրէաների թագա-
 ւոր հռչակելով, գրգռումէ ժողովրդին և
 արգելում որ հռոմայեցւոյ կայսրին հարկ
 չըտան, այլ իրան ճանաչեն թագաւոր։
 Առաջին երկու յանցանքի համար Յիսուս
 հրէից օրէնքով պէտք է քարկոծուէր, իսկ
 վերջին յանցանքի համար՝ հռոմայեցւոյ օ-
 րէնքով պէտք է խաչուէր որովհետեւ այդ
 ժամանակ Հրէաստանը հռոմայեցւոյ իշխա-
 նութեան տակ էր։

Այս մեղադրութիւնները Յիսուսի վերայ
 բարուրելուց յետոյ մինչև լոյս չարչարե-

ցին, և լոյսը բացուելուց յետոյ պարտա-
տուեցին տանել Պիղատոսի մօտ դատելու:

* *

ՀԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ

Քյ. Նոր սքանչելիք այսօր տեսանեմք յաշ-
խարհի ի մէջ հողեղինաց, արարածք արար-
չին սպանու թեան խորհին զխորհուրդ:

Որ բանիւ զերկինս և զերկիր հաստա-
տեաց յոչնչէ գոյացուցեալ՝ վաճառի այսօր
դիւրագին ընդ երեսուն արծաթոյ:

Ով Յուդա արտասուելի երկնաւոր վար-
դապետին սպանութեան խորհի զխորհուրդ
մատնելով անօրինաց՝ զի խաչեացի ի մէջ եր-
կրի:

~~~~~

ԳԼ. Դ.

Պիղատոսի Կապապանը և Յիսուսի խաչն ու հանք:

Հրէաները ամբողջ գիշեր Յիսուսին չար-  
չարելուց յետոյ լոյսը բացուեց թէ ոչ,  
առան տարան Պիղատոսի մօտ, որ հռովմա-  
յեցւոց կողմից էր նշանակուած Երուսա-  
ղէմի դատաւոր: Պիղատոս հարցաքննելուց  
յետոյ երբ տեսաւ որ Յիսուս մեղաւոր չէ  
կամեցաւ արձակել, բայց հրէաները սկսեցին  
աղաղակել պահանջելով որ պտուժուի Քրիս-  
տոս: Պիղատոս երբ իմացաւ թէ Քրիստոս  
Գալիլեացի է, հրէաներին գլխից հեռաց-  
նելու համար նորան Գալիլեացի թագաւոր  
Հերովդէսի մօտ ուղարկեց՝ որ այդ ժամա-  
նակ զատկի տօների պատճառով Երուսաղէ-  
մումն էր գտնուում: Հերովդէս էլ յանցանք  
չը գտնելով Յիսուսի վերայ՝ դարձեալ Պիղա-  
տոսի մօտ ուղարկեց: Պիղատոս շատ աշխա-  
տեց Յիսուսին արձակել բայց հրէաները  
միշտ կրկնում էին որ խաչուի և վերջն էլ  
սկսեցին սպառնալ ասելով որ եթէ Յիսու-



սին չը խաչեա, կայսրի բարեկամ չես, որովհետեւ ով իրան թագաւորէ կոչում նա կայսրին հակառակ է վարվում և պէտք է խաչուի. դա էլ իրան թագաւոր է կոչում:

Պիղատոս վախեցաւ և թոյլ տուեց խաչել:

Հրէաները երբ խաչելու հրաման ստացան խաչը բարձին Յիսուսի ուսին և տարան գողգոթա, ուր առ հասարակ կատարվումէր մահապարտների պատիժը. գողգոթան երուսաղէմին մօտիկ մի բարձրաւանդակ էր և այդ տեղ խաչեցին Յիսուսին: Սովորութիւն էր որ մահապարտների յանցանքը նուցա խաչի վերայ գրվումէր, Պիղատոսն էլ Յիսուսի խաչի վերայ գրեց. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից, որովհետեւ Յիսուս դատապարտուած էր իւրեւ կայսրին հակառակ իրան թագաւոր հռչակող:

Յիսուսին խաչելիս շատ բազմութիւն էր հաւաքուել. կանայքն լաց էին լինում, հրէաները ծաղրումէին Յիսուսին և ասում. ուրիշներին էր աստեցնում, եթէ Աստուծոյ որդին է, թող իրան փրկի, զինուորները

ասումէին Հրէաների թագաւորն ես և քո անձը չես կարողանում ազատել. Յիսուսի հետ մինը աջ, միւսը ձախ կողմը խաչուած էին երկու աւաղակներ, ձախ կողմի աւաղակն էլ էր ծաղրում ասելով. չէ որ դու Քրիստոսն ես. քեզ էլ փրկիր մեզ էլ:

Յիսուս այդ տառն տանջանքի մէջ երբ տեսաւ մօրը, որ խաչի տակ կռկում ու լաց էր լինում, իւր դուռ մտնացաւ և իւր աշակերտներից մէկին յանձնեց, որի անունը Յովհաննէս էր. ասելով. ահա քո որդին. Յովհաննէսին էլ ասելով, ահա քո մայրը: Երբ մօր հոգսից ազատուեց. բարձր ձայնով ասաց. Հայր քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին և հոգին աւանդեց: Այդ ժամանակ արեգակը խաւարեց մութը ամբողջ երկիրը պատեց, երկիրը շարժուեց և քարերը պատառուեցին: Հարիւրապետը, որին յանձնուած էր Յիսուսին պատժելու հսկողութիւնը, տեսնելով այս ասուց. արդարեւ այս մարդը արդար էր: Փողովուրդը յուսահատ և տրտում յետ դարձաւ. իսկ Գա-



լիւեայից եկած կանայքը տեսան այս ամե-  
նը (Դ. 1. 14.):

\*\*\*  
\* \* \*

ՀԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ.

Ե. Արծաթսիրութեմը մուկալ Յուդա,  
զիւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն  
արծաթայ հրէիցն մասնէր:

Ընդ որում ես համարեցից ասէ զնա  
կալարուք ու հաւկայր նենգութեան նշան  
և առիթ մահու:

Մերկացաւ յինքենէ գլխաւորապէս  
սուրբ հոգին և զգեցաւ զսատանայ որպէս  
հանդերձ արկաւ զիւրեաւ:

ԳԼ. Ե.

Յիսուսի խաչմահ.

Յիսուսին ուրբաթ օրը խաչեցին և ուր-  
բաթ օրն էլ երբ հոգին աւանդեց, հրէից

իշխաններից մէկը, Արեմաթացի Յովսէփ  
անունով մի ուրիշ իշխանի հետ, որի ա-  
նունը Նիկոտիմոս էր Պիղատոսին մեծ ըն-  
ծաներ տալով Յիսուսի մարմինը առաւ,  
խաչից իջեցրեց, հրէից սովորութեան պէս  
պատանեց և թաղեց Գողգոթային մօտ մի  
պարտիզում նոր պատրաստած գերեզմա-  
նի մէջ: Գալիլեայից եկած կանայքը տեսան  
Յիսուսի թաղումը և գնացին իւր ու խուռնիկ  
պատրաստելու, որ Շաբաթ օրը անցնելուց  
յետոյ գան և Յիսուսի գերեզմանի վերայ  
խուռնիկ ծխեն. որովհետեւ հրէաները շաբաթ  
օրն են կիւրակէ պահում և այդ օրը ամե-  
նեւ ին բան չեն անում:

Հրէաները Յիսուսի գերեզմանի վերայ մի  
մեծ քար ձգեցին. կնքեցին և պահապան-  
ներ կարգեցին, որ աշակերտները չըգողա-  
նան մարմինն ու առեն թէ յարութիւն է  
առել. որովհետեւ Յիսուս շատ անգամ ա-  
սել էր թէ ինքն երեք օրից յետոյ յարու-  
թիւն պէտք է անի:

4873/41/ 403-2006/670





ՀԱՐԱԿԱՆ ԹԱՂԱՐԱՆ.

ԳՅ. Յովսէփ ճշմարիտ և արդար հայցէր ի պիղատոսէ զհասարակաց զպարգևատուն, որ տուաւ մեզ գանձ անկողսպտելի:

Պատեալ սուրբ կտաւովք զմարմինն տէրունական զարկողն զլոյս որպէս զօթոց, որ զգեցոյց մեզ զգետտ անկողսպտելի:

Նդաւ ի նորափոր ի վիմի և մատանեաւ կնքեցաւ, որ զնախատեղծն կենդանացոյց և զմարդկան կապանս մահաւ ելոյծ:

ԳԼ. 2.

Յիսուսի յարիւնդը.

Շաբաթ երեկոյեանը լոյս կիւրակէ Մագդաղենացի Մարիամը ուրիշ կոնանց հետ իւր ու խունկ պատրաստած՝ գնաց գերեզման: Այդ Ժամանակ մեծ շարժումն եղաւ և հրեշտակը երկնքից իջնելով գերեզմանաբարը շուռ տուեց ու նստեց նորա վի-

րայ. պահապանները այս բանից վախեցան և մեռելի պէս վայր ընկան:

Մարիամ մագդաղենացին տեսնելով սր գերեզմանը գտարկէ, սկսեց լալ. հրեշտակը աօաց. ով կին, ինչո՞ւ ես լալիս. Մարիամ պատասխանեց. աիրոջս այստեղից տարել են և չըգիտեմ ո՞ւր են դրել, այս ասելով Մարիամ յետադարձաւ տեսաւ Յիսուսին և կարծելով թէ պարտիզպանն է, աօաց, տէր, եթէ դու ես վեր առել Յիսուսի մարմինը, ո՞ւր ես դրել, Յիսուս պատասխանեց. Մարիամ: Մարիամ ճանաչեց Յիսուսին և գոչեց. վարդապետ, և կամեցաւ մօտենալ: Յիսուս աօաց ինձ մի՛ մօտենար. տեսնուելու Ժամանակ դեռ ունենը, գնա և աշակերտներին պատմիր ինչ որ տեսար (Յով. Ժ.):

Մարիամ մագդաղենացին և միւս կանայքը եկան պատմեցին աշակերտներին և ուրիշներին. աշակերտները չըհաւատացին, և Պետրոսն ու Յովհաննէսը գնացին գերեզման, և միայն պատանքի կտաւը տեսնելով՝ զարմացան թէ ինչ եղաւ Յիսուս. (Ղուկ. Ժ.):



Յարութիւնն առած օրը երեկոյեանը երբ աշակերտները հրէաների ահից գոնէրը վաղ նստած էին Յիսուս եկաւ նոցա մօտ և ասաց. ողջոյն ձեզ. նոցա թերահաւատութիւնը փորձառեալութեամբ համար իւր ձեռքերի ոտների և կողի խոցուածքը ցոյց տուեց և վիշելով նոցա վերայ ասաց. Առէ՛ք սուրբ հոգի. ում մեղքին թողութիւն տաք, ներուի, ում թողութիւն չըտաք, թողութիւն չըլինի. Ինչպէս ինձ իմ հայրն է ուղարկել, ես էլ ձեզ եմ ուղարկում. գնացէ՛ք քարոզեցէ՛ք բոլոր հեթանոսներին, մկրտեցէ՛ք Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով ինչ որ ձեզ պատուիրեցի՝ սովորեցրէ՛ք նոցա որ պահեն. ես էլ մինչև աշխարհի վերջը ձեզ հետ եմ (Մատթ. ԷԷ)։

— Յիսուս վիշելով իւր աշակերտների վերայ և տալով հոգին սուրբ հաստատեց ձեռնադրութեան խորհուրդը և ասելով ում մեղքին թողութիւն տաք ներուի, հաստատեց խոստովանութեան խորհուրդը՝ ինչ իրաւունք որ առաքեալներն ստացան, նոյն

իրաւունքը ձեռնադրութեամբ ստանում են քահանաները եպիսկոպոսները ու հայրապետները, որոնք առաքելների յաջորդներն են։ Դնացէ՛ք քարոզեցէ՛ք և մկրտեցէ՛ք ասելով իրաւունք տուեց նոյա մկրտութեան խորհուրդը կատարելու։

\*\*\*

#### ՀԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ.

ԲՂ. Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանացն՝ ի գերեզման ասելով. Քրիստոս յարեալ ի մեռելոց։

Եւ առ նոսա ասէր հրեշտակն զի խընդրէք զկենդանին ընդ մեռեալս, Քրիստոս յարեալ ի մեռելոց։

Փութացարձաք ով սուրբ կանաչք և պատմեցէք աշակերտաց ասելով, Քրիստոս յարեալ ի մեռելոց։





ՊԼ. Է.

ՀԻՔԵԳԻՆ՝

Յիսուս իւր յարութիւնից յետոյ քառասուն օրն էլ մնաց աշխարհին վերայ, և աշակերտներին խոստանալով ուղարկել սուրբ հոգին նոցա մխիթարելու և շնորհ տալու համար՝ վերացաւ երկինք։ Աշակերտները ուրախ ուրախ վերադարձան Երուսաղէմ և սուրբ Հոգու գալստեան էին սպասում, միշտ գնում էին տաճարն աղօթելու և փառաբանում էին Աստուած։

Ջատկից յիսուն օր յետոյ հրէաների Պենտեկոստէի տօնի օրը բոլոր աշակերտները միասին վերնատանն էին յանկարծ սաստիկ հոգմի ձայն լսուեց և տունը լցրեց. և սուրբ հոգու շնորհը հրեղէն լեզուների նման իջաւ ամեն մի աշակերտի վերայ։ Բոլորն էլ սուրբ հոգով լցուեցին և սկսեցին այլ և այլ լեզուներով խօսիլ։ Շատերը զարմանում էին ոմանք էլ արեա՞ծ էին համարու՞մ նոցա։

Այս հրաշքը տեսնելով շատերը հաւատացին և Յիսուսի հաւատացողների թիւը այն օրը երեք հազարի հասաւ։

— Սուրբ Հոգւոյ գալստեան տօնը կատարվում է Համբարձումից առաջ օր յետոյ և Հիքեգին է կոչվում։

\* \* \*

ՀԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱՍՏԵԱՆ.

Քչ. Այսօր երկնայինն ուրախացան ընդ երկնաւորացս նորոգումն. քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոյ։

Այսօր հոգանիւթեայ բնութիւնս շնծայ ընդ հօր հաշտութեան. քանզի որ երարձ զհոգին ի մարդկանէ մարմին եղելոց դարձեալ վերադին զնոյն պարգեւէ։

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զգալուսա սուրբ Հոգւոյն, որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս և գերապայծառս, երգեն ընդ սրովքէս զերեք սրբեկին։



ԳԼ. Ը.

Մահն և վերադարձն Աստուծամօր

Յիսուս ինչպէս խաչի վերայ կարգադրել էր, Աստուծամայրը Յովհաննէս առաքեալի մօտ էր ապրում: Յիսուսի քառասուն ինն թուին Աստուծամայրը իմանալով որ մահը մօտեցել է. կամեցաւ բոլոր առաքեալներին տեսնել նոցա օրհնել և ապա մեռնել: Աստուծամօր փափագը կատարուեց. Ս. Հոգու ազդեցութեամբ առաքեալները ամեն կողմից հաւաքուեցին Երուսաղէմ, միայն Բարդուղիմէոս առաքեալը չը հասաւ. Աստուծամայրը բոլորին էլ օրհնեց և հոգին աւանդեց: Առաքեալները Աստուծամօր մարմինը մեծ հանգիստով թաղեցին Գեթսեմանում:

Եկաւ հասաւ բարդուղիմէոս առաքեալը և Աստուծամօրը վախճանուած և թաղուած գտնելով շատ տխրեց և անմխիթար սուգ էր անում: Առաքեալները նորան մխիթարելու համար, տուին նորան տիրամօր

պատկերը և տարան գերեզման որ գերեզմանը տեսնի բայց գերեզմանը դատարկ գտան որով հեռաւ Յիսուս Քրիստոս հրեշտակների բազմութեամբ և փառքով իւր մօր մարմինը փոխադրել էր երկինք. իւր արքայութեան մէջ: — Աստուծամօր վերափոխման տօնը ամեն տարի տօնվում է կիւրակէ օր օգոստոսի 12-18, երբ պատահի կիւրակէն: Վերափոխման տօնին Ս. պատարագից յետոյ խաղող է օրհնելով: Վերափոխման տօնը ինն օր է կատարվում. և նա քաղցրութեամբ մեր աղաչանքը լսելով, իւր որդի Յիսուս Քրիստոսին բարեխօսում է մեր համար:

\*\*\*

ԵՐԳ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուծածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատն զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ:



ՀԱՐԱԿԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

էջ. Անկանիւք առաջի քո, Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ:

Բարեխօսեա՛ն վասն անձանց մերոյ և աղաչեա՛ն զմիածին Որդիդ:

Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ԳԼ. Թ.

Ս. Թ. աբղէս և Ս. Բ. աբղէս

Յիսուս երբ Հրէաստանում քարոզումէր, Հայաստանումն էլ թագաւորումէր Աբգար, որ շատ իմաստուն և խելօք մարդ էր: Աբգար ծանր հիւանդացաւ և լսելով Յիսուսի համբաւը, ասաց. նա կամ Աստուած է կամ Աստուծոյ որդի, և մարդ ուղարկեց որ գայ իրան բժշկի և իւր Եգիսիա քաղաքում բընակի. մի պատկերահան էլ ուղարկեց որ եթէ Յիսուս չըգայ, գոնէ պատկերը բերեն:

Աբգարի ուղարկած մարդիկը տեսան Յիսուսին և Աբգարի խնդիրը յայտնեցին. Յիսուս ասաց. երանի՛ որ չեն տեսել հաւատումն. այդ երանին Աբգարին էր վերաբերում, որոհեաւ նա չը տեսած հաւատաց, իսկ հրէաները Յիսուսի քարոզութիւնները լսելով և հրաշքները տեսնելով միշտ, ոչ միայն չըհաւատացին, այլ պատրաստուէին խաչել տալ: Յիսուս յայտնելով որ ինքն չի կարող գալ խոտացաւ իւր առաքեալներից մէկին ուղարկել Աբգարի խնդիրը կատարելու. և տեսնելով որ պատկերահանը աշխատումէ իւր պատկերը հանել և չի կարողանում առաւ կտաւը դրեց իւր երեսին և այսպէս իւր պատկերը դրոշմելով կտաւի վերայ, տուեց պատկերահանին. այն պատկերը կոչւումէ անձեռագործ պատկեր կամ գաստառակ՝ և երկար ժամանակ Եգիսիայումն էր:

Յիսուսի պատուէրին համեմատ Հոգեգալուստից յետոյ Ս. Թ. աբղէս առաքեալը եկաւ Հայաստան Եգիսիա քաղաքը, բժշկեց



Աբգարին, քարոզեց Քրիստոսի հաւատը, բոլորին էլ մկրտեց Աբգարի հետ և նոյա վերայ մի եպիսկոպոս ձեռնադրելով՝ գնաց Հայաստանի միւս կողմերը քարոզելու: Հայաստանի մի մասի վերայ իշխումէն Աբգարի քրոջ որդի Սանատրուկը, նա քաջուելով իւր քեռուց, իւր ամբողջ ժողովրդի հետ քրիստոնեայ դարձաւ, բայց Աբգարի մահից յետոյ դարձեալ կռապաշտութիւն ընդունեց, սկսեց քրիստոնէութիւնը հաւաքել՝ քրիստոնեաներին էլ որոնք չէին թողնում քրիստոնէութիւնը, նահատակել:

Ամենաջերմ քրիստոնեայն էր իւր գուտարը Սանգուխտ Ս. կոյսը, որին Ս. Թադդէոս առաքեալի հետ նահատակեց: Քրիստոնեաները յետոյ թէ Ս. Թադդէոսի և թէ Ս. Սանտուխտ կոյսի գերեզմանի վերայ վանքեր շինեցին: Այս երկուսի տօնն էլ կատարվում է ամառը, միասին:

Ս. Թադդէոս առաքեալից յետոյ Ս. Բարդուղիմէոս առաքեալը Աստուածամօր պատկերը հետը բերելով, Ս. Բարդուղիմէոս ա-

ռաքեալը Աստուածամօր պատկերը թողեց Տիգրիս գետի փին Կանգուար լեռան մօտ, որտեղ շինեց և կռոսնաց անապատ ինքն քարոզեց Հայաստանում և Սանտորուկից նա հատակուեց. քրիստոնեաները նորա վերայ էլ վանք շինեցին:

— Թադդէոս առաքեալի գերեզմանը գտնելովում է այժմ պարոյից Հայաստանում Արտազ գաւառում վանքն էլ կոչվում է Ս. Թադդէոս առաքեալ. կոյ Բարդուղիմէոսինը տաճկաց Հայաստանում Աղբալի գաւառում և վանքն էլ կոչվում է Ս. Բարդուղիմէոս առաքեալ: Ս. Թադդէոսի և Ս. Բարդուղիմէոսի տօնը միասին տօնումենք գեկտեմբեր ամսին, մեծ հանգիստով, որովհետեւ մեր առաջին լուսաւորիչը նոքա եղան և մեր եկեղեցու հիմքը նոքա դրին:

\* \*

ՀԱՐԱՆԱՆ ԱՌԱՔԵԼՈՑ.

այ. Հայրատունի այգւոյն հրեղէն պա-



րիսպք և բարձր աշտարակք, ասկեղէն բա-  
ժակք և ժիր մատուակք Հայաստանեայցս  
հարք հոգևորք Բարդուղիմէոս և Թադդէոս,  
բարեխօս լերսւք առ տէր վասն անձանց  
մերոց:

\* \*

Դ. Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո  
անշարժ պահեալ և զերկրպագուս անուանի  
քում պահեալ ի խաղաղութեան:

\* \*

Բարեխօսութեամբ վերին քո զօրաց, միշտ  
անշարժ պահեալ զաթու Հայկազնեայցս:

ԳԼ. Ժ.

Ս. Գրեգոր Լուսինայ:

Ս. Թադդէոս և Բարդուղիմէոս առա-  
քեալներէց յետոյ երկու հարիւր տարուց

աւելի քրիստոնէութիւնը հալածուած լի-  
նելով՝ համարեալ ընդհանրեալ էր: Եթէ քր-  
իստոնէաները էլ կային շատ սակաւութիւ-  
էին և սարերի մէջ ու թաքուն տեղեր այրե-  
րի մէջ էին ապրում. կուտալու թեան մէջ  
էին ընկել մարդիկ, մինչև որ 301 թուին Ս.  
Գրեգոր լուսաւորիչ նորից սկսեց քարո-  
զել և նորից համոտել քրիստոնէութիւնը:

Ս. Գրեգոր լուսաւորիչը մի չար իշխանի  
որդի էր. այդ իշխանի անունը Անակ էր.  
Պարսից թագաւորը իւր նախարարներին մի  
անգամ կանչեց և ասաց, ով որ Հայոց Խոս-  
րով թագաւորին սպանի՝ նորան մեծ պա-  
տիւններ կը տամ և իմ երկրորդը կընշա-  
նակեմ. Անակը, որ Հայոց թագաւորի բա-  
րեկամն էլ էր, խոտաջաւ սպանել Հայոց  
թագաւորին և, որպէս թէ փախտաւան է  
պարսից թագաւորից, եկաւ Հայաստան.  
Նա Արտազ գաւառում, ուր թաղուած էր  
Ս. Թադդէոս առաքեալը 256 թուին ու-  
նեցաւ մի որդի և այդ Ս. Գրեգորն էր:  
Խոսրով թագաւորը, Անակին իբրեւ իւր



բարեկամ՝ և ազգակից մեծ սիրով ընդունեց: Միանգամ Անակ Խոսրովի հետ որսի գնաց, և իւր եղբօր հետ յարձակուելով Խոսրովի վերայ սպանեց, Հայոց զօրքերն էլ նորան ամբողջ ընտանիքով կոտորեցին և ազատուեց Ս. Գրիգոր որին իւր դայեակը որ քրիստոնեայ էր և անուէնը Սուրբի փախցրեց Կեսարիայ: Սուրբ Գրիգոր կեսարիայում մեծացաւ քրիստոնէական հաւատով, պատիւեց և ունեցաւ երկու որդի մէկի անունը Վրթանէս էր իսկ միւսի անունը Արիստակէս:

Պարսից թագաւոր, Խոսրովի մահից յետոյ եկաւ հայաստան շատ կոտորածներ արեց երկիրը իւր իշխանութեան տակ առաւ և Խոսրովի բոլոր ցեղը ջնջեց, որ հայոց թագաւորութեան ժառանգ էլ չմնար: միայն հայոց իշխանները մի տղայ, որի անունն էր Տրդատ և մի աղջիկ որի անունն էր Խոսրովի դուստ ազատեցին, Տրդատին փախցնելով Յունաստան, իսկ Խոսրովի դուստրին հայոց ամուր բերդերից մէկը: Տրդատ Յունաս-

տանում զինւորական արհեստի մէջ մեծացաւ և մեծամեծ քաջութիւններ գործեց:

Սուրբ Գրիգոր իմանալով Տրդատի ուղին ելլը իւր հօր յանցանքը բաւելու համար գնաց նորա մօտ ծառայելու և ամենայն հաւատարմութեամբ ծառայում էր: Հռովմայեցւոյ կայսրը Տրդատի քաջութիւնը վարձատրելու համար զօրք տուեց, որ գայ և իւր երկրին տիրէ իւր հօր տեղ թագաւորելով: Տրդատ երբ հասաւ հայաստանի եկեղեցի գաւառը այն տեղ մեծ մեծ զոհեր արեց կուռքերին և պատուիրեց որ բոլորն էլ զոհ անեն: Ս. Գրիգոր հրաժարուեց, յայտնելով որ, ինքն քրիստոնեայ է: Տրդատ սկզբում սկսեց քաղցրութեամբ հանդել որ թողնէ Քրիստոնէութիւնը և ինքն էլ զոհ մատուցանէ, բայց տեսնելով որ Ս. Գրիգոր հաստատուն է իւր քրիստոնէական հաւատին, սաստիկ բարկացաւ և ծանր չարչարանքներ տուեց, յետոյ երբ իմացաւ որ Գրիգոր իւր հօրը սպանող Անակի որդին է, ծգել տուեց Արտաշատ Քաղաքի



մահապարտներին խորվիրապի մէջ: Այդ տեղ  
Ս. Գրիգոր 15 տարի մնաց և կերա-  
կրվումէր մի բարի պառաւի օրական մի  
կտոր հացովը:

Տրդատ Հայաստանը ազատելով պարսից  
իշխանութիւնից ինքն խաղաղ թագաւորու-  
մէր, այդ ժամանակ Հայաստան եկան կոյ-  
սեր, որոնք Հռիփսիմեան սուրբ կոյսեր են  
կոչվում Ս. Հռիփսիմէի անուանով, որ շատ  
գեղեցիկ և իմաստուն մի կոյս էր. Տրդա-  
տը կամեցաւ Ս. Հռիփսիմէին կին առնել,  
բայց Ս. Հռիփսիմէն յայտնելով որ ինքն  
քրիստոնեայ է և խոստացել է կոյս մնալ,  
մերժեց Տրդատին. Տրդատ բարկացաւ բո-  
լոր կոյսերին էլ նահատակեց. այս դէպքը  
պատահեց Վաղարշապատ քաղաքում 301  
թուին:

Տրդատ Ս. կոյսերին նահատակել տալուց  
յետոյ մոտաւոր շուրջի շուրջ խելագարուեց և  
խողի պէս աղբանոցներումն էր թաւալում.  
Նորա քոյրը Խոսրովիտուխտ կոյսը, երազի  
մէջ տեսաւ որ Ս. Գրիգոր կենդանի է և

կարող է Տրդատին բժշկել: Նա խորվիրա-  
պից հանել տուեց Ս. Գրիգորին, և Ս. Գր-  
իգոր Տրդատին բժշկելուց յետոյ Ս. կոյսե-  
րի դեռ անթաղ մնացած մարմինները իրանց  
նահատակուած տեղը թաղիլ տուեց ու ըս-  
կըսեց քարոզել քրիստոնէութիւնը, բոլորն  
էլ հաւատացին. և Ս. Գրիգորին ընտրելով  
իրանց հայրապետ, երբ նա ձեռնադրուեց,  
բոլորն էլ մկրտուեցին: Այսպէս քրիստո-  
նէութիւնը հրկրորդ անգամ Հայաստանում  
հաստատուեց Ս. Գրիգորի ձեռքով, ամբողջ  
ազգը լուսաւորուեց Ս. Գրիգորի քարոզու-  
թեամբ, և Ս. Գրիգորին լուսաւորիչ անուա-  
նեց:

— Ս. Գրիգոր լուսաւորչի տօնը երեք ան-  
գամ ենք մօնում, վիրապ ձգուելունը՝ մեծ  
պատին, վիրապից դուրս գալունը և քարո-  
ղութիւն անելունը՝ Հոգեգալստից յետոյ,  
իսկ մահից յետոյ մարմինը գտնելունը ա-  
մառը:



ՀԱՐԱԿԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ.

Դէ. Այսօր զիմանալի լուսոյն ծագողն ի խաւարի նստելոցս, զԳրիգորիս սուրբ հայրապետն եկայք վերապատուեսցուք:

Այսօր զանապական Հոգւոյն պարգեւն բաշխող որդւոց թորգոմայ, յորդիս լուսոյ նովաւ ծնեալք եկայք վերապատուեսցուք:

Այսօր զանուանածային բանին պատմողն ի Հայաստան աշխարհի, աշակերտեալ նմա մանկունք, եկայք վերապատուեսցուք:

Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք ընդ հրեշտակս, յիշատակի լուսաւորչին փառք ի բարձունս Աստուծոյ:

ԳԼ. ԺԱ.

Ս. Էջ. Գա. Զ.

Ս. Գրիգոր լուսաւորիչ ազգը քրիստոնեայ դարձնելուց յետոյ Տրդատի հետ նա-

հատակուած կոյսերի գերեզմանների վերայ մատուռներ շինեց և դռքա են Ս. Հռիփսիմէի Ս. Գայիանէի և Շողակաթի վանքերը որոնք Վաղարշապատի մօտն են: Սիանգամ տեսիլքի մէջ Ս. Գրիգոր լուսաւորիչ տեսաւ որ Յիսուս ոսկի ուռը ձեռքին իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ, ուռով զարկեց գետինն, գետինը սկսեց դողդալ և անդուհալից էլ ձայներ դուրս եկան. լուսեղէն կամար բարձրացաւ Յիսուսի իջած տեղը և ձեացրեց մի մեծ վանք լուսեղէն խաչը Գմբէթի վերայ:

Ս. Գրիգոր այս տեսիլքին համեմատ Տրդատի հետ Քրիստոսի իջած տեղը շինեց մի մեծ վանք լուսեղէն կամարների ձեով այդ տեղ հաստատեց իւր Հայրապետական աթոռը:

Այս վանքը լուսեղէն կամարների համար, կոչուեց Շողակաթ. և միաժին Յիսուսի իջման տեղը լինելուն համար կոչուեց Էջմիածին:



—Ս. Էջմիածինն է բոլոր հայ եկեղեցի-  
ներին մայրը: Հայոց հայրապետը, որ  
լուսաւորչի յաջորդն է, Ս. Էջմիածնումն  
է նստում: այն տեղ է օրհնում Ս. մեռօնը  
և այն տեղ ձեռնադրում աշխահիս վերայ  
գտնուած բոլոր հայ եպիսկոպոսներին:

Ս. Էջմիածնումն է Ս. Գեղարքը որով  
Յիսուսի կողմ խաչի վերայ ծակեցին, և  
Սուրբ լուսաւորչի աջը: Ս. Էջմիածնի տօնը  
տարին երկու անգամ է տօնւում: հիմ-  
նարկութիւնը Հոգեգալուստի յետոյ, իսկ  
Շողակաթինը՝ Աստուածածնի շաբաթօրը:

ՀԱՐԱԿԱՆ ԻԶՄԻԼՆԻ.  
Գլ. Էջմիածինն ի հօրէ, և լոյս փռուաց ընդ  
նմա ձայնք հնչեցին սանդարամեօք անդրն-  
դոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,  
պատմէր ցնծութեամբ հաւատացեալ ար-  
քային:

Եկայք շինեցուք սուրբ զխորանն  
լուսոյ. քան զի ի սմա ծագեաց մեզ լոյս  
ի Հայաստան աշխարհի:

\* \*

Հանգանակ Հասարայ,

Հայաստանեայց անբէկեղեցոյ.

Հաւատամք ի մի Աստուած ի հայրն ամե-  
նակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց  
և աներևութից: և ի մի տէր Յիսուս  
Քրիստոս որդին Աստուծոյ, ծնեալն յԱստու-  
ծոյ հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ  
հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ,  
աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝  
ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն՝ ի բնու-  
թենէ հօր. քով ամենայն ինչ եղև յեր-  
կինս և՛ ի վերայ երկրի երեւելիք և անե-  
րևոյթք: Որ յազապս մե մարդկան և վասն  
մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մար-  
մնացաւ, մարդացաւ, ծնաւ կառարեւո-  
պէս ի մարիամայ Երբոյ կուսէն Հոգովն



սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ առուր յարուցեալ ելեալ ի յերկինս նովին մարմնովն նրաւ ընդ աջմէ Հօր: Գալոցէ նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան: Հաւատամք և ի սուրբ, Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւտետարանս. Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և քնակեցաւ ի Սուրբսն:

Հաւատամք և ի մի միայն ընդ հանրական և առաքելական եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն, և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգոց և մարմնոց՝ յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր

Սուրբ հոգի կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին և թէ փոփոխելիք են կամ այլ այլայլելիք՝ զայնպիսիսն նշովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի

\*  
\* \*

Ս. ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԱՍԱԾԸ.

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:


ԱՄԷՆ:
















ՀՀ Ազգային գրադարան



NL0686225



